Լավ եւ առաքինի բնավորությունը կարող է
հետ կանգել կայսերական բեռից:

Պլատոն, Հանրապետություն
Գիրք առաջին

Եւ այսպես Թրասիմախոս, այլեւս ոչ մի կասկած չկա, որ ոչ մի արվեստ եւ իշխանություն իր անձնական շահի համար չի գործում, եւ, ինպես արդեն նշել էինք, նրանք կառավարում եւ հետապնդում են ավելի թույլ հպատակների շահերը, այլ ոչ թե ուժեղներինը՝ տկարի եւ հպատակի շահերը գերադասելով ավելի ուժեղին (զորավորին):
Իմ թանկագին Թրասիմախոս, ինչպես հենց նոր ասացի, սա է պատճառը, թե ինչու ոչ ոք կամովին չի ցանկանում իշխել, քանզի ոչ ոք առանց վարձատրության չի ցանկանում իր ձեռքը վերցնել ուրիշների դժվարություններն ու խնդիրները եւ փորձել դրանք լուծել:

Քանզի իրական վարպետը (արվեստագետը) իր գործունեության եւ ուրիշին հանձնարարական տալու մեջ ոչ թե իր անձնական շահերն է հետապնդում, այլ իր հպատակինը, դրա համար որպեսզի կառավարիչները ցանկանային կառավարել, նրանք պետք է վարձատրվեն [վարձատրության] երեք եղանակներից որեւէ մեկով՝ դրամով, պատվով կամ պատասխանատվությունից խուսափելու համար վճարվող տուգանքով:

- Ինչ՞ ինիկատի ունես, Սոկրատես,- հարցրեց Գլավկոնը: Առաջին երկու եղանակները բավականաչափ հասկանալի են, սակայն խուսափելու համար վճարվող տուգանքը ինձ համար անհասկանալի է. եւ ինչպե՞ս կարող է տուգանքը վարձատրություն լինել:

- Դու ուզում ես ասել, որ չե՞ս հասկանում այս վարձատրության էությունը, որը լավագույն մարդկանց համար կառավարելու ամենամեծ դրդապատճառն է: Դու չը գիտե՞ս, որ փառասիրությունն ու ագահությունը խայտառակություն են համարվում:

- Շատ ճիշտ է:

- Եւ ես ասացի, որ այս պատճառով փողն ու պատիվը նրանց չեն գրավում: Լավ մարդիկ չեն ցանկանում կառավարելու համար բացահայտորեն վարձատրություն պահանջել եւ դրանով վարձկանի անուն վաստակել, ոչ էլ

գաղտնիաբար հասարակության եկամուտները անձնական շահերի համար օգտագործել՝ դրանով գողի անուն վաստակելով: Եւ ոչ էլ պատվի համար կանեն դա, քանի որ փառասեր չեն:

Դրա համար էլ պարտակվորություն պետք է դնել նրանց վրա, եւ նրանք պատժվելու վախից ստիպված կլինեն ծառայել:
Եւ ինչպես ես ենթադրում եմ, սա է պատճառը, թե ինչու ստիպված պաշտոնավարելու փոխարեն պաշտոնի ետեւից վազելն է համարվում ամոթալի:
Իսկ ամենամեծ պատժը այն է, որ նա, ով հրաժարվում է կառավարել՝ ստիպված է լինում ենթարկվել իրենից ավելի վատ կառավարչին:

Ես կարծում եմ, որ բարի մարդիկ նշվածի հանդեպ վախից դրդված են իշխում, ոչ թե այն պատճառով, որ ցանկանում են, այլ որովհետեւ նրանք ուրիշ ելք չունեն, ոչ թե այն պատճառով, որ նրանք կարող են այդ պաշտոնից որեւէ շահ կամ հաճույք ստանալ, այլ այն պատճառով, որ դա անխուսափելի է, որովհետեւ նրանք հնարավորություն չունեն պետական ղեկը իրենց նման կամ իրենցից լավ մարդկանց հանձնել:

Դա թույլ է տալիս մտածել, որ եթե քաղաքը բացառապես կազմեին բարի մարդիկ, ապա պաշտոնից խուսափելը նույնչափ մրցակցության առարկա կդառնար, ինչքանով որ այժմ պաշտոն ստանալն է [մրցակցության առարկա]:
Հետեւապես մենք շատ պարզ փաստարկ ունենք, ըստ որի ‘ճշմարիտ’ կառավարչի էությունը չի կայանում իր անձնական շահերը, այլ իր հպատակների, ենթակաների շահերը պաշտպանելը, եւ ով որ սա գիտակցում է, ի հարկե կնախընտրի պարգեւատրում ստանալ ուրիշից քան այլ մարդուն պարգեւտրում տալ:
Ես համաձայն չեմ Թրասիմախոսի այն պնդման հետ, ըստ որի արդարությունը զորավորի իրավունքն է:

Ներկայումս այս վերջին հարցի քննարկումն այլեւս չպետք է շարունակվի:
Բայց Թրասիմախոսն ասում է, որ անարդար կյանքն ավելի շահավետ է քան արդարը, եւ նրա այդ նոր պնդումը, ինձ անհամեմատ ավելի կարեւոր նշանակություն ունեցող հարց է թվում:
Մեզանից ո՞վ ավելի ճիշտ խոսեց: Եւ կյանքի ո՞ր ձեւն ես դու նախընտրում, Գլավկոն:

Նա պատասխանեց,- Իմ կարծիքով արդար մարդու կյանքն է ավելի շահավետ (գերադասելի):

Պլատոն, Հանրապետություն
Գիրք հինգերորդ

Այս դրությունից դուրս գալու միակ ելքն է հետեւյալը. կամ փիլիսոփաները պիտի դառնան թագավորներ իրենց երկրներում, կամ մեր իշխող խավը պետք է իրական իմաստասեր լինեն, այլ խոսքով, քաղաքական ուժը եւ փիլիսոփայությունը պետք է շաղկապվեն: Իմ սիրելի Գլաուկոն, քանի դեռ տարբեր բնավորությունների տեր մարդիկ չեն հարկադրվում իրենց անձնական հակումները սանձելու, պետական կառավարման մեջ թերությունները չեն վերանայ, ո՛չ պետությունների եւ ո՛չ էլ ողջ մարդկության համար:

Պլատոն, Հանրապետություն
Գիրք յոթերորդ

- Ուրեմն մեր պարտականությունն է, ասացի ես, իբրեւ քաղաքի հիմնադիրների, ստիպել ազնիվ բնավորություն ունեցողներին դեպի այն ուսմունքները, որոնց մասին մենք նախապես խոսեցինք. իբրեւ ամենաբարձր առարկաների. նրանք պետք է շարունակեն բարձրանալ այնքան, մինչեւ հասնեն կատարելությանը (բարձունքին), եւ երբ նրանք արդեն հասնեն այդ բարձունքին եւ բավականաչափ բան տեսնեն, մենք նրանց երբեք թույլ չպետք է տանք զբաղվելու այն բաներով, որոնցով նրանք այժմ են զբաղվում:

- Ինչի՞ մասին է խոսքը:

- Այդ բարձունքի (կատարելության) վրա հաստատ մնալ, ասացի ես: Բայց սա չպետք է թույլ տրվի. նրանք նորից պետք է ներքեւ իջնեն իրենց շղթայակիցների մոտ եւ մասնակից լինեն նրանց տանջանքներին, որպեսզի հասկանան, թե արդեոք նրանք դրան արժանի են, թե՝ ոչ:

Բայց դա անարդար չէ՞,- ասաց նա,- եթե մենք ստիպենք նրանց ապրել վատ կյանքով, երբ նրանք արդեն լավագույն կյանքին հասել են: (տեսել են լավագույն կյանքը):

Բայց դու նորից մոռանում ես, ասացի ես, բարեկամս, որ օրենքի (օրենսդիրների) նպատակը քաղաքում սոսկ մի հատուկ դասակարգի հաջողության վրա ազդելը չէ, այլ այնպիսի հնարավորություն ստեղծելը, որ այն բոլորի երջանկության վրա ազդի, դրդելով բոլոր քաղաքացիներին, համոզմամբ կամ ստիպմամբ, փոխադարձ օժանդակել միմյանց, ինչ չափով որ նրանցից յուրաքանչյուրը կարող է հասարակական գործին օժանդակել եւ այս հանգամանքը ինքնին քաղաքացիներին այնպես կդասավորեր, որ նրանցից յուրաքանչյուրը ազատ չէր լինի վարվելու ըստ իր հաճույքի, այլ կդառնար միջոց պետական համակարգը ամրապնդելու գործում:

- Իսկապես որ, նա ասաց, մոռացել էի:

Նկատիր, ո'վ Գլավկոն, ասացի, որ մենք անարդարություն չենք գործի, եթե մեր փիլիսոփաներին ստիպենք, որ հասարակության նկատմամբ հոգատարություն ցուցաբերեն եւ պաշտպանեն այն: Քանզի մենք նրանց կբացատրենք, որ այլ քաղաքների փիլիսոփաները պարտավորված չեն մասնակցել հասարակական աշխատանքներին. - քանի որ նրանք ազատակամ են մեծանում, պետությունը չի ցանկանա ունենալ նրանց նման փիլիսոփաներ:
Ինքնուսը, որն իր աճի, զարգացման համար չի օգտվել պետության օժանդակությունից, չը պետք է ձգտի իր փոխադարձ երախտագիտությունը հայտնել պետությունը:

Բայց ձեզ մենք պատրաստել ենք որպես փեթակի մեղվի-թագավոր (կառավարիչ), ձեր եւ ամբողջ պետության թագավոր: Դուք նրանցից ավելի լավ եւ կատարելագույն դաստիարակություն եք ստացել, հետեւաբար ավելի լավ կերպով պետք է կարողանաք համատեղել այս երկու պարտականությունները:

Ուրեմն, ձեզանից յուրաքանչյուրը, երբ իր ժամանակը գա, պետք է իջնի ներքեւ՝ ստորգետնեա կացարան, եւ վարժվի ստվերային կյանքին:

Քանզի վարժվելով այդ տեղի կյանքին, դուք հազարավոր անգամ առավել լավ կտեսնեք այնտեղ կատարվող երեւույթները, քան տեղացիները: Եւ ավելի լավ կճանաչեք նրանց իսկությունը՝ թե ի՞նչ նշանակություն ունեն դրանք եւ ի՞նչ բանի օրինակներ են, քանզի դուք տեսել եք ճշմարիտը, գեղեցիկը, արդարը եր բարին:

Եւ այսպես, մեր քաղաքը, որը նաեւ ձերն է, կդառնա իրականություն, ոչ թե սոսկ երազ, եւ չի կառավարվի այլ քաղաքաների ոգով, ուր մարդիկ կռվում են

իրար հետ կեղծ արժեքների համար, վատնելով իրենց ուժերը իշխանության համար պայքարում, կարծելով, թե դա մի ինչ որ մեծ գործ է:

Մինչդեռ իրողությունը թերեւս այն է, որ մի քաղաքում, ուր կառավարողները նվազագույն չափով կցանկանան իշխել՝ ամենաազնիվ իշխանությունը կտիրի եւ ստիպողաբար երկպառատությունից զերծ կլինի, եւ այնտեղ, ուր նրանք ավելի եռնադուն կերպով կցանկանան իշխել՝ ճիշտ հակառակ իշխանությունն կտիրի:

- Անկասկած,- պատասխանեց նա:

Եւ երբ մեր աշակերտները սա լսեն, կհրաժարվե՞ն արդեոք իրենց մասնակցությունը բերել հասարակական կյանքի աշխատանքներում, երբ հնարավորություն ունեն իրենց ժամանակի մեծ մասը անցկացնել իրար հետ՝ ապրելով երկնային լուսավորության մեջ:

Հնարավոր չի, որ նրանք մերժեն, ասաց նա, քանզի նրանք արդար են, եւ այն պարտավորությունները, որոնք մենք դնում ենք նրանց վրա, նույնպես արդար են: Եւ ոչ մի կասկած չը կա, որ նրանք պիտի պաշտոններ վերցնեն խիստ անհրաժեշտության պատճառով, ճիշտ հակառակ զանազան քաղաքներում մեր արդի իշխողներին:

Այսպես է բանը, ասացի ես, ով ընկեր:

Դու քո ապագա կառավառողների համար պետք է գտնես ավելի լավ կյանք, եւ այդ ժամանակ դու կարող ես լավ կառավարվող պետություն ունենալ, քանզի այսպիսի պետությունում միայն կկառավարեն նրանք, ովքեր իսկապես հարուստ են, ոչ թե ոսկով կամ արծաթով, այլ առաքինությամբ եւ գիտելիքով, որոնք կյանքի գլխավոր օրհնություններն են:
Մինչդեռ եթե աղքատներն ու թշվառականները իրենց անձնական շահերը հետապնդելով պետական գործերին մասնակցեն, հուսալով որ այդ տեղից կճանկեն, կստանան իրենց գլխավոր բարիքը, այն ժամանակ, ի հարկե անհնար է, որ այնտեղ կարգուկանոն լինիլ, քանի որ իրար հետ կպայքարեն պաշտոն զբաղեցնելու համար, եւ այդպես ձեւավորված հասարակությունը կկործանի եւ կառավարողներին եւ նմանապես ամբողջ քաղաքը:

Շատ ճիշտ ասացիր,- կրկնեց նա:

Եւ միայկ կյանքը, որն առհամարում է քաղաքական փառասիրությանը՝ իրական փիլիսոփայությունն է: Դու ուրիշ մեկը գիտե՞ս:

Իսկապես ոչ, ասաց նա:

Եւ կառավարողները չպետք է իշխանության սիրահար լինեն: Եւ եթե նույնիկս այդպես լինի, ապա իշխանության սիրահարները պետք է մրցակիցներ լինեն եւ նրանք պետք է պայքարեն իշխանության համար:

-Անտարակույս: